ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

07.06.2019թ.
Ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Ա. Սահակյան)

1. Մասնակցի՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
(Ա. Սահակյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ «Արալպլաստ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին:
24.05.2019թ.-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ «Արալպլաստ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն առկա են և բավարարում են հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:
1.2 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Արալպլաստ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից:
1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակցին՝ «Արալպլաստ» ՍՊԸ-ին, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:
1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ, քան գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Սաֆարյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան